«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ. ԿԱՏԵԳՈՐԻԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԻՆԵ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ

«Սոցիալական պաշտպանություն» հասկացությունը շուկայական տնտեսություն ունեցող երկրներում սկսեց լայն տարածում գտնել 20-րդ դարի 30-40-ական թվականներին և մատնանշում էր քաղաքացիներին բարեկեցության որոշակի մակարդակ ապահովելու նպատակով սոցիալական երաշխիքներ տրամադրելու պետության դիրքորոշումը:

«Սոցիալական պաշտպանություն» եզրույթը քննարկելիս չենք կարող շրջանցել մի շարք գործոններ, որոնց բովանդակության սպառիչ ու ճշգրիտ բացահայտումը և սահմանումը առանցքային նշանակություն ունեն այս հասկացությունը սահմանելու համար: Հարկ է նշել, որ սոցիալական պաշտպանության վերաբերյալ թե՛ հայրենական, և թե՛ օտարերկրյա մասնագիտական գրականության մեջ չկան անկյունաքարային նշանակություն ունեցող մի շարք հասկացությունների միասնական ընդունելի սահմանումներ, որի պատճառով դրանց կիրառման ժամանակ երբեմն շփոթ է առաջանում: Յուրաքանչյուր հեղինակ կամ բացատրական բառարան տալիս է այս կամ այն հասկացության իր մեկնաբանությունն ու սահմանումները, որոնք թեև, որպես կանոն, ունեն իմաստային համանման ծանրաբեռնվածություն, սակայն հաճախ ամբողջովին նույնական չեն: Ուստի փորձենք ընդհանրացված ներկայացնել և քննարկել նշված խնդրի վերաբերյալ որոշ հետազոտողների բացատրությունները, գիտական գրականության մեջ տեղ գտած սահմանումները, և տալ մեր բացատրությունները և առաջարկությունները:

«Բնակչության սոցիալական պաշտպանություն» հասկացության բովանդակությունը քննարկելիս շատ կարևոր է անդրադառնալ *«սոցիալական ապահովություն»* հասկացությանը: Գիտական գրականության մեջ կարելի է հանդիպել տեսակետի, ըստ որի՝ «սոցիալական ապահովություն» եզրույթի իմաստը՝ որպես կարիքավոր քաղաքացիների սոցիալական աջակցմանն ուղղված պետական միջոցառումների համալիր, ավելի շուտ պատմական բնույթ ունի, քանի որ վերաբերում է 20-րդ դարի որոշակի ժամանակաշրջանի: Մի շարք հեղինակների կարծիքով, վերջին հարյուրամյակում առկա է այս ոլորտում պետական գործունեությունը արտացոլող ընդհանրացնող եզրույթի՝ «սոցիա-

լական պաշտպանության» կիրառման միտումը: Միևնույն ժամանակ կարևորվում է նաև «սոցիալական ապահովություն» եզրույթի պահպանման անհրաժեշտությունը՝ մատնանշելու պետական գործունեության այն ուղղությունը, որն առնչվում է այն քաղաքացիների սոցիալական պաշտպանությանը, ովքեր որոշակի ներդրումներ են կատարել հասարակության համար, սակայն ընդգրկված չեն սոցիալական ապահովագրության համակարգում: Այս քաղաքացիների թվին են դասվում, օրինակ, պատերազմի վետերանները:

Որոշ հեղինակների կարծիքով էլ բովանդակային որևէ տարբերություն չկա «սոցիալական ապահովություն» և «սոցիալական պաշտպանություն» հասկացությունների միջև: Որպես օրինակ կարող ենք բերել հետևյալ սահմանումը՝ «…բնակչության սոցիալական պաշտպանությունը կամ սոցիալական ապահովությունը զարգացած արդյունաբերական երկրներում քաղաքացիների՝ օրենսդրորեն ամրագրված իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների ամբողջություն է, որն ապահովում է ընդունելի կենսամակարդակ»[1]:

«Սոցիալական ապահովություն» հասկացությունը մեզ է ժառանգվել բնակչության սոցիալական պաշտպանության խորհրդային պետական-պատերնալիստական համակարգից, երբ պետությունը վերացրեց նախկին հասարակարգում գործող սոցիալական պաշտպանության բազմազան սուբյեկտների (պետական և ոչ պետական) համակարգը և իրեն հռչակեց բնակչության սոցիալական պաշտպանության միակ սուբյեկտը՝ բնակչության համար սահմանելով իր կողմից իրականացվող պաշտպանության ձևերը և չափը՝ վերջինիս ապահովվածության աստիճանը: Հետխորհրդային երկրներում, այդ թվում և Հայաստանում, բնակչության սոցիալական պաշտպանության համակարգերում իրականացվող բարեփոխումների գործընթացներում դեռևս մեծ է խորհրդային սոցիալական ապահովության համակարգի իներցիոն ազդեցությունը:

«ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ» աշխատությունում սոցիալական ապահովությունը մեկնաբանվում է որպես «...պետության կողմից այն մարդկանց մատուցվող գոյության բավարար միջոցների քանակ, որոնք լրիվ կամ մասնակի զրկված են աշխատելու և եկամուտ ստանալու հնարավորությունից»[2]:

Այսպիսով, թեև «սոցիալական պաշտպանություն» և «սոցիալական ապահովություն» հասկացությունները օգտագործվում են միմյանց փոխարեն, այնուամենայնիվ դրանք հաճախ մեկնաբանվում են

---

[1] **Миронова Т. К.** К вопросу об определении понятия «социальная защита» // «Трудовое право», № 3, 2008 // http://www.top-personal.ru/lawissue.html?1548, 23.03.2016թ., ժամը՝ 12:56:

[2] «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» / ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., 2010, էջ 453:

որպես տարբեր բովանդակություն ունեցող հասկացություններ՝ կախված այս կամ այն համատեքստից:

Մեր կարծիքով, «սոցիալական ապահովություն» և «սոցիալական պաշտպանություն» հասկացությունները ունեն տարբեր բովանդակություն. սոցիալական ապահովությունը սոցիալական արդարության սկզբունքի վրա հիմնված սոցիալական պաշտպանության մեխանիզմ է:

«Սոցիալական պաշտպանություն» եզրույթի բովանդակությունը քննարկելիս շատ կարևոր է նաև անդրադառնալ *«սոցիալական անվտանգություն»* եզրույթին: Վստահաբար կարող ենք փաստել, որ վերջինս այսպես կոչված «ինտեգրալ» հասկացություն է, քանի որ ներառում է մարդկային կեցության բնույթը արտացոլող անվտանգության տարբեր ձևեր: Սրանով պայմանավորված՝ սոցիալական անվտանգությունը սոցիալ-հումանիտար տարբեր գիտությունների ուսումնասիրության առարկա է, մասնավորապես՝ այս կատեգորիան առավելապես կարևորվում է փիլիսոփայության, հոգեբանության և սոցիոլոգիայի շրջանակներում:

Փիլիսոփայությունը սոցիալական անվտանգությունը դիտում է որպես սոցիալական երևույթ: Սակայն, ինչպես պնդում է Ն. Ն. Ռիբալկինը, այս երևույթի օբյեկտիվ էությունը, որի վրա հիմնվելով կարելի էր հստակ սահմանել «անվտանգություն» հասկացությունը, առ այսօր փիլիսոփայության մեջ բացահայտված չէ, թեև առկա են անվտանգության բազմաթիվ սահմանումներ[3]:

Ըստ Ռիբալկինի՝ անվտանգությունը՝ որպես սոցիալ-փիլիսոփայական կատեգորիա, չի կարող ուսումնասիրվել միայն պաշտպանված լինելու վիճակի տեսանկյունից, քանի որ այն որոշակի համակարգի հատկանիշ է, ինչպես նաև որոշակի համակարգերի գործառման հանրագումարային արդյունք[4]: Մեկ այլ հետազոտողի՝ Ա. Ե. Շարիխինի կարծիքով, անվտանգությունը՝ որպես փիլիսոփայական կատեգորիա, ենթադրում է նաև մարդկության գոյության ապահովմանը ուղղված գործունեություն և ոչ թե պարզապես այդ գործունեության արդյունք[5]: Փիլիսոփայության մեջ լայնորեն կիրառվող մոտեցումներից մեկի համաձայն՝ կարևորվում է սոցիալական անվտանգության և սոցիալական համակարգի միջև սերտ փոխկապվածությունը, մասնավորապես՝ շեշտադրվում են համակարգի ինքնապահպանման և ինքնավերարտադրման հատկանիշները՝ որպես հասարակության անվտանգության հիմք: Համապատասխանաբար, մարդկության գոյությունը վտանգող աղբյուր է սոցիալական համակարգի՝ ինքնապահպանման և ինքնավերարտադրման

---

[3] Տե՛ս **Рыбалкин Н. Н.** Философия безопасности. М., 2006, էջ 16-17:

[4] Տե՛ս նույն տեղը:

[5] Տե՛ս **Шарихин А. Е.** Безопасность как философская категория // "Безопасность", 1994, № 6, էջ 114:

կարողությունների նվազումը: Այլ կերպ ասած՝ սոցիալական համակարգի վիճակի փոփոխությունը որոշակի վտանգի առկայության ազդանշան է, որը կարող է խարխլել համակարգը: Դա կարող է տեղի ունենալ ինչպես մարդու միջամտության, այնպես էլ արտաքին ուժերի ազդեցության հետևանքով, որոնք կարող են խախտել համակարգի հավասարակշռությունը:

Փիլիսոփայության մեջ «անվտանգություն» երևույթի էության բացահայտման գործում կարևորվում է նաև «վտանգ» և «անվտանգություն» կատեգորիաների միջև դիալեկտիկական կապը, քանի որ ենթադրվում է, որ բոլոր սոցիալական համակարգերը ենթարկվում են որոշակի վտանգների. վտանգը բացարձակ է, իսկ անվտանգությունը՝ հարաբերական, քանի որ դրսևորվում է այլ երևույթների հետ փոխհարաբերություններում և կախված է դրանցից:

Փիլիսոփայական մոտեցումից էականորեն տարբերվում է սոցիալական անվտանգության ուսումնասիրման հոգեբանական մոտեցումը, որտեղ կարևորվում է միջանձնային փոխհարաբերությունների և անձի հոգեկան կառուցվածքի ուսումնասիրությունը: Անվտանգության երևույթի հոգեբանական վերլուծության հիմնական նպատակը հոգեբանական այնպիսի մեթոդների մշակումն է, որոնց կիրառման դեպքում հնարավոր է սոցիալական անկայունության պայմաններում հասնել անձի պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը:

Սոցիոլոգներն այս եզրույթը ուսումնասիրում են անվտանգության սոցիոլոգիայի շրջանակներում, որի առարկան հասարակության կայուն զարգացումը խաթարող ռիսկի գործոնների, վտանգների, ինչպես նաև անվտանգության տարբեր տեսանկյունների ուսումնասիրումն է: Այսօր գիտական գրականության մեջ կարելի է հանդիպել անվտանգության տարբեր ձևերի, ինչպես օրինակ՝ ազգային, տնտեսական, քաղաքական, տեղեկատվական, միգրացիոն, ժողովրդագրական, տարածաշրջանային և այլն:

Լինելով «ինտեգրալ» հասկացություն՝ սոցիալական անվտանգությունը արտացոլում է հասարակության գործառման փոփոխականությունը և վերջինիս՝ բնական ու տեխնածին միջավայրերի հետ փոխազդեցությունը: Սոցիալական անվտանգությունը ենթադրում է անձի, սոցիալական խմբերի, հասարակության կենսական կարևոր շահերի պաշտպանվածությունը արտաքին և ներքին վտանգներից: Փաստորեն, սոցիալական անվտանգությունը առաջին հերթին ենթադրում է մարդու իրավունքների իրականացում[6]: Անձի սոցիալական անվտանգության ապահովման տեսանկյունից կարևորվում է սոցիալական

[6] Տե՛ս **Римашевская Н. М.** Человеческий потенциал России и проблемы «сбережения населения» // "Российский экономический журнал", 2004, № 9-10, с. 22-40:

ռիսկերի կանխարգելումը, որը հնարավոր է իրականացնել բնակչության սոցիալական պաշտպանության միջոցով:

Սոցիալական ռիսկի բովանդակությունը քննարկելիս գիտական գրականության մեջ կարևորվում է մեթոդաբանական հետևյալ նախադրյալների առկայությունը. սոցիալական ռիսկը

ա) սոցիալական համակարգի ատրիբուտ է,

բ) ենթադրում է սոցիալական համակարգի շարժմամբ պայմանավորված՝ բարենպաստ և ոչ բարենպաստ հետևանքների հավանականություն,

գ) համակարգային ռիսկ է, որը ներթափանցում է բոլոր սոցիալական գործընթացներն ու կառուցվածքները[7]:

Վերոնշյալ մեթոդաբանական նախադրյալների ընդունումը հնարավորություն է տալիս հստակեցնել սոցիալական ռիսկի բովանդակությունը սոցիալական ստատիկայի և սոցիալական դինամիկայի տեսանկյունից. մասնավորապես՝ առաջին դեպքում սոցիալական ռիսկը կարող է սահմանվել որպես սոցիալական վտանգի իրավիճակ, իսկ երկրորդ դեպքում՝ որոշակի գործողությունների ամբողջություն՝ ուղղված ինչպես սոցիալական համակարգի (հասարակության), այնպես էլ առանձին սոցիալական խմբերի նպատակների իրականացմանը[8]:

Այս սահմանումները առաջարկած հեղինակը ռիսկերի սոցիալական իրականությունը դիտում է որպես սոցիալական հիմնախնդիրների իրականություն[9], իսկ սոցիալական հիմնախնդիրների հաղթահարման գործում կարևորում է սոցիալական քաղաքականության դերը:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են սոցիալական ռիսկերի տարբեր տեսակներ: Ջ. Մերդոկը, օրինակ, առանձնացնում է սոցիալական ռիսկերի հետևյալ տեսակները՝

- ✓ աղետալի (կատաստրոֆիկ) և ոչ աղետալի (ոչ կատաստրոֆիկ),
- ✓ կովարիանտային և ոչ կովարիանտային,
- ✓ մեկանգամյա և կրկնվող[10]:

Սոցիալական աղետալի ռիսկերի ներքո Մերդոկը նկատի ունի հազվադեպ տեղի ունեցող, սակայն ընտանիքի եկամտի վրա էական ազդեցություն թողնող իրադարձությունները, ինչպես օրինակ՝ հաշմանդամությունը, կերակրողի մահը և այլն: Սոցիալական ոչ աղետալի ռիսկերի ներքո հեղինակը նկատի ունի այնպիսի իրադարձություններ-

---

[7] Տե՛ս **Аствацатуров С. В.** Реальность социального риска или риск социальной реальности // «Изменяющееся общество», № 1, 2, Ер., 1998, էջ 2:

[8] Տե՛ս նույն տեղը:

[9] Տե՛ս նույն տեղը:

[10] Տե՛ս **Murdoch J.** Between the Market and the State: can informal insurance patch the safety net?-Washington, D.C.: The World Bank, 1997, էջ 187-207:

ը, որոնց հավանականությունը ավելի մեծ է, իսկ ազդեցությունը ընտանիքի եկամտի վրա՝ ավելի փոքր: Այս կարգի սոցիալական ռիսկի օրինակ է աշխատունակության ժամանակավոր կորուստը:

Ռիսկերի երկրորդ տիպը պայմանավորված է տեղական կամ տարածքային նշանակության որևէ արտակարգ իրադարձության հավանականությամբ: Դրանք, այսպես կոչված, կովարիանտային և ոչ կովարիանտային ռիսկերն են: Այս դեպքում նկատի ունենք հետևյալը. արդյոք տվյալ տարածաշրջանի կամ երկրի ամբողջ բնակչությունը ունի՞ կորուստներ, օրինակ՝ ջրհեղեղի, երաշտի կամ գերսղաճի դեպքում, թե՞ տուժածները առանձին տնային տնտեսություններն են:

Ռիսկերի երրորդ տիպը վերաբերում է մի շարք իրադարձությունների մեկանգամյա կամ բազմակի ի հայտ գալու հավանականությանը, որոնց բացասական հետևանքներն ընտանիքը ի վիճակի չէ միայնակ հաղթահարելու:

Վերոհիշյալ սոցիալական ռիսկերի կառավարումը իրականացվում է սոցիալական քաղաքականության տարբեր միջոցառումների օգնությամբ: Սոցիալական քաղաքականությունը բնութագրվում է որպես սոցիալական հիմնախնդիրների կոլեկտիվ լուծման ռազմավարություն[11], որի նպատակը բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացումն է, աղքատության և անհավասարության նվազեցումը: Սոցիալական քաղաքականության համակողմանի իրագործումը քաղաքացիների ցանկացած կատեգորիայի նկատմամբ նշանակում է վերջիններիս սոցիալական պաշտպանության իրականացում: Փաստորեն, քաղաքացիների սոցիալական պաշտպանությունը նպատակ է, որին հասնելու համար սոցիալական քաղաքականությունը դիտվում է որպես միջոց. սոցիալական քաղաքականության միջոցառումների իրագործման միջոցով իրականանում է սոցիալական պաշտպանությունը:

Այսպիսով, ընդհանրացնելով այս ամենը, մեր կարծիքով, սոցիալական պաշտպանությունը կարող ենք ***սահմանել որպես պետական և ոչ պետական մարմինների կողմից իրականացվող որոշակի միջոցառումների ամբողջություն, որն ուղղված է սոցիալական ռիսկերի կանխարգելմանը, ինչպես նաև դրանց հետևանքների մեղմացման, վերացման միջոցով բնակչության սոցիալական անվտանգության ապահովմանը:***

Բանալի բառեր – *սոցիալական ապահովություն, սոցիալական անվտանգություն, սոցիալական ռիսկ, սոցիալական ռիսկերի կառավարում, սոցիալական քաղաքականություն*

---

[11] Տե՛ս **Ա. Մարկոսյան, Ն. Գեղամյան,** Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2006, էջ 12:

МАРИНЕ ЯРМАЛОЯН – *Содержание термина «социальная защита»: категориальный анализ.* – В статье рассматриваются некоторые термины, относящиеся к социальной защите, без ясной и точной формулировки которых невозможно определить содержание понятия «социальная защита», и предлагается новая дефиниция последнего.

Ключевые слова: *социальное обеспечение, социальная безопасность, социальный риск, управление социальными рисками, социальная политика*

MARINE YARMALOYAN – *The Content of the Term "Social Protection": a Categorial Analysis.* – Some terms related to "social protection" are discussed in the article the clear and precise definition of which is very important for defining the content of the term "social protection". Besides, the author presents the definition of the term "social protection" in the article.

Key words: *social provision, social security, social risk, management of social risks, social policy*